



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱՅ ԸՆԴԱՐԹ 21 ԱՊՐԻԼ 1862

ԹԻՒ 673

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԻԱՅ 21 ԱՊՐԻԼ

Փարիզի մէջ քաղաքագէտ հասարակութիւնը գլխաւորապէս զբաղեալ է մօտիւ տը Լափալթ մարքէզին և մօտիւ տը Կոյոն զօրապետին մէջ պատահած ծանր տարածայնութեանը վրայօր։ Յայտնի է որ առաջինը Վաղդիոյ զեօպան է ի Հռոմ և երկրորդը՝ նոյն մայրաքաղաքը գտնուած զաղղիացի զօրաց զերին հրամանատարն է։ Եւս երկու երկու պաշտօնատարաց քաղաքական կարծիքը՝ իրարմէ շատ տարբեր են, այսինքն մօտիւ տը Կոյոն պատու թեան աշխարհական իշխանութեան հաստատուն պահուելուն կուսակից է, և իւր նպատակը յառաջ տանելու համար քաղաքական գործքերու ևս միջամտիւ կը ըլլայ, որ զեօպանական պաշտօնին միայն կը վերաբերին։ Մօտիւ տը Լափալթ մարքէզը, որ Հռոմեական գահին աշխարհական իշխանութեան քննադատ կու գէ բոլոր ազատասիրաց հետ, մօտիւ տը Կոյոն հրամանատարին ընթացքին վերայ վշտանալով՝ մօտերս վերադարձաւ ի Փարիզ և Կոյոն իմացաց իրաց այս եղելութիւնը, յաւելցնելով թէ չկրնար Հռոմի մէջ Վաղդիոյ զեօպանութեան պաշտօնը վարելու, քանի որ մօտիւ տը Կոյոն այնտեղ պիտի գտնուի։

Եւս քաղաքագէտ հասարակութիւնը անհամբեր օրտիւ կը սպասէ տեսնելու թէ Նաբուլէոն կայսրը ինչ որոշում պիտի ընէ այս ասարածայնութեան վրայօր։ Եւս մօտիւ տը Կոյոն զօրապետը իւր պաշտօնէն զրկուի, ըսել է որ Հռոմի խնդրոյն լուծումը պիտի չուշանայ։ Իսկ ընդհակառակն եթէ տը Լափալթ մարքէզին հրամեշտը ընդունուի, այս բանը տպացոյց մը պիտի ըլլայ թէ կղերական կուսակցութիւնը տակաւին զօրաւոր է, մանաւանդ որ իրեն հզօր պաշտպան ունի զվահագա Կոյսրուհին։

Փարիզի Սենթիէօ օրացիքը սուտ կը հանէ ըզլուրը որ տարածուած էր, թէ Նաբուլէոն կայսրը մօտերս Լոնտոն և Վէլին ճանապարհորդութիւն մի պիտի ընէ։ «Լորին Վահագաութիւնը, կըսէ յիշեալ պաշտօնական օրագրութիւնը, մինչև ցայսօր պայտիսի ճանապարհորդութիւն մի ընելու միտք չունեցաւ»։

Վահագաութիւնը գարուն մէջ երբ կրօնական զրգուութիւնները և կախները վերջին տատիւնն ստատկացին էին ի Վաղդիոյ, Վալուգիա զաբին մէջ հազարէն կատարած մը պատահեցաւ, և 4000 հոգի չափ օրը ծարակ եղան, բողբոջ կան կրօնը ընդունած ըլլան համար։

Եւս ստակալի կատարածին տարեգործը տօնախմբելու համար, Վալուգի արքայիսկապտը իւր հովուական նամակաւ իմաց տուաւ թէ Մայիսի 16էն մինչև 23 ըստ նոր տումարի, հանդիսաւոր թափօրներ և փառաւոր արարողութիւններ պիտի կատարուին։

Երկրայ լուսաւորեալ դարուն մէջ, այսպիսի տօնախմբութիւն մը կատարելու անօրէնութիւնը անհաւատարմ պիտի երևի մեր ընթերցողաց, այսու ամենայնիւ Վալուգի արքայիսկապտին այսպիսի հրամանագիր մի հանելը եղած ըլլնցած բան մըն է, որ մեծ գայթակղութեան պատճառ եղաւ, և որուն գէժ ստատիկ յանդիմանութիւններ գրեցին Վաղդիոյ լրագրութիւնները և մանաւանդ Օքսֆորդի Նաբուլէոն և Սենթիէօ օրագրիները, Կառաւարութիւնը տեսնելով թէ այս տօնախմբութիւնը գաղաղարտութիւն հանգէս մըն է, փութացաւ արգելելու։

Դոյն, որպէս զի չըլլայ թէ հասարակաց անդորութիւնը վաղաժամ այս օրինակ տնտեսական արարողութեան մը պատճառաւ։

Նաբուլէոն Կայսրը յաղարկած զեօպանները Փարիզ հասնելէն քանի մի օր ետքը փառաւոր հանգիստ ներկայացան Նաբուլէոն կայսրը, և անոնց գլխաւորը տեսնախօսութիւն մի ըրաւ, որուն մէջ զինի խնդակից ըլլալու վտան նորահաստատ տնտեսական գաղաղարկութեանը, որ Նաբուլէոն և Վաղդիոյ մէջ գտնուող արարողութիւնները պիտի աւելցնէ, իւր վահագաութին փափաքը յայտնեց որպէս զի իւր զեօպանները գաղղիական պատերազմական նաւով մի վերադառնան իրենց հայրենիքը, Վահագա Կայսրը պատասխան տալով՝ ընդունեցաւ անոնց խնդիրը, մանաւոր կերպիւ մի իմացնելով թէ հիւրասիրութիւնը քաղաքակրթեալ ազգաց գլխաւոր առաքինութիւններն մէկն է։

Կայսրուհին և կայսրական ծաղիւհատի Իշխանը ներկայ էին այս հանդիպին։ Յայտնի է որ Նաբուլէոն զեօպանները Փարիզէն շուտով պիտի մեկնին և Լոնտոն պիտի ելնան, ինչպէս թափուհայն այցելութիւն ընելու համար ի կողմանէ իրենց Վահագաութին։

Սենթիէօ Բրիտանիոյ Վիքթորիա թագուհին, որուն սիրտը լի է իւր ամենասիրելի լծակին լիպեթ իշխանին մահուան կսկիծով, հրաման ըրաւ որ այս տարի իւր ծննդեան տարեգործը տօնախմբուի։ Վիքթորիա թագուհին 1819 Մայիսի 12-24ին ծնած է, ըսել է որ գալամայն մէջ իւր 43երորդ տարին պիտի ըլլնցնէ։

Ինչպէս հասարակաց խորհրդանոցին վերջին նիստերուն մէկին մէջ Իտալիոյ և Հռոմի վրայօր խօսք եղաւ։ Իրկու հռոմեական պատգամաւորներ իրենց անգամակիցներուն, այսինքն միւս ազգային երեսփոխանաց ուղարկութիւնը հրաւիրեցին ի վերայ ազատելի կացութեանը, յորում կը գտնուէին իրենց ըսածին նայելով, Իտալական թերակղզին։ Վիտոր Էյարա՝ որ արտաքին գործոց երկրորդ տեսուչ է, և և կամից պաշտօնէն միտար լիտութիւնը զօրաւոր փաստերով հերքեցին յիշեալ պատգամաւորաց անհիմն խօսքերը, յառաջ բերելով թէ Իտալիան աւելի բարեբաւտիկ և աւելի գոհ է այժմ, քան աւելի 15-20 տարի յառաջ։

Վաղդիոյ զօրաց Հռոմի մէջ մնալուն վրայօր խօսելով, ըրաւ Վիքթորիան ըսաւ թէ, «Նաբուլէոնութեան սկզբնային զեօպան մըն է, թէպէտ և այս սկզբները ընդունուած է Վաղդիոյ կառավարութեանէն, ինչպէս նաև Վաղդիոյ տերութեանէն»։

Հոնիական կղզեաց ազգային խորհրդանոցը, որ մօտերս բացուեցաւ, Վաղդիոյ թագուհին կողմանէ կարգեալ բարձր պաշտօնատար լորտին տեսնախօսութեանը պատասխանելով ըսաւ, ինչպէս ամեն տարի սովորութիւն ունի ըսելու, թէ Հոնիական կղզեաց Հոնաստանի հետ միաւորութիւնը միմիայն միջոցն է այս երկրին հասարակաց գործոց կացութիւնը բարելոքելու։

Բարձր պաշտօնատար Լորտ յիշեցաւ Յոնիական բարդութիւնը, թէ ամենին իշխանութիւն չունի միաւորութեան խնդրոյն վրայօր խօսելու։ «Բանդի Վաղդիան» այս կղզեաց պաշտպանութիւնը իւր վրայ առնելով, յաւելցուց յիշեալ լորտը, իրեն վրայ պարտականութիւններ ևս առաւ և իրաւունքներ ստացաւ։ Վաղդիան այս պարտականութիւնները ի գործ պիտի դնէ ամենայն զգուշաւոր հաւատարմութեամբ։

Թեամբ, սակայն հաստատութեամբ միտքը դրած է նաև իւր իրաւունքը կատարելապէս անփնտռ և անեղծ պահելու։ Սենթիէօ օրէնսդիր խորհրդանոցը թող հոգ տանի իւր ճշմարիտ պաշտօնը կատարելու, որ է օգտակար օրէնսգրութիւններ ընել, և մէկ կողմէ, յետ այսու, որ և ինչ յաւելման ի մօտին այնպիսի խնդրոյ մի, որ կարգադրուած է վահագաութեան հիշէն, որուն միայն կը վերաբերի այս օրոշումը։

Վերկայի լուրերը նպատաւոր են Հիւսիսային Սիւրեալ Կահանաց համար, որոց զօրաբանակը հսկայաքաղ յառաջ կը ընթաց մեծ և պղտիկ յաղթութիւններով։ Եւս յաջողութիւնները այնչափ մեծ են, որ Լոնտոնի Վայլ օրագիրը կը կարծէ թէ, շատ կարելի է որ այս ամառը չանցած պատերազմը վերջանայ, մանաւանդ որ Վաղդիոյ վերջին կառավարութիւնը կը խոստանայ գրամական օգնութիւն ընել, այսինքն՝ որչափ որ կարելի է, միասուց փոխարէնը հատուցանել հարաւային այն նահանգաց՝ որոնք յանձնառու կ'ըլլան գերեաց ազատութիւն չունորհել և գերութիւնը ջնջել։

Նաբուլէոն տպատմութիւնը վերջապէս ըլլմնցաւ։ Յիշեալ քաղաքը և բերդը այսօրուան օրս Օթոման թագաւորին զօրաց ձեռքը կը գլուխուին։ Ինչպէս մեր նախնիքաց թուովը կը զրուցէինք, ապստամբները՝ անանկով թէ անկարելի է աւելի երկար ժամանակ դիմանալ, անձնատուր եղան։ Իսկ անոնց գլխաւորները՝ 19 հոգի, որոց անյիշատարութիւն շնորհած չէր թագաւորը, պարտաւորեցան, իրենց կուսակիցներով ընդամենը 250 հոգի չափ, անգղիացի և գաղղիացի երկու պատերազմական շոգենաւերով Հոնաստանէն մեկնել և օտար երկիր ապստամուիլ։

Օթոման թագաւորը՝ այս յաղթութենէ ետեւ, փութացաւ հրաման տալու որ ազգային երեսփոխանաց և ծերակուտի ժողովները շուտով գումարուին և ազգային պահապան զօրաց կազմութեանը վրայօր խորհուրդ ընեն և որոշեն, ի՞նչ զօրագնաց կազմութիւնը ըստ թագաւորական հրամանագրոյն, Վիքթորիոյ և Իտալիայի մէջ ընդունուած դրութեանը համեմատ պիտի ըլլայ։

Ներկայի ժողովուրդը մեծապէս գոհ եղաւ այս ազատասիրական նոր կարգադրութենէն, ոչ թոյ ետեւէն, կըսուի թէ ուրիշ զանազան զիջումներ ևս պիտի ըլլան։

ՏԵՂԵԿԱԿԻՐ

(Շարունակութիւն) (4)

Նկատելի ընդհանուր հաշուեցուցակն ևս վեց գլխաւոր մասանց կը բաժնուի, որ հետեւեալներն են

1. Ուղղակի տուրք, 2. Անուղղակի տուրք, 3. Տէրութեան զանազան հաստատութիւններէ եկած եկամուտը, 4. Հատուկ հասոյթներ և զանազան հարկեր, 5. Տէրութեան մէկ քանի երկիրներէն առնուած որոշեալ տուրքերը, 6. Պաշտօնատանց ու մանց սեփական եկամուտները։

Այս ամէն եկամուտը գումարն է 2,442,368 քսակ և 169 զուրուշ, կամ ըրա 11,164,552։ Եւս գումարը վերադրեալ ծախուց գումարէն հանելով, կը մնայ 344,446 քսակ և 375 զուրուշ, կամ 1,574,536 քսակ ծախք։

(1) Տես յաջորդյա նախընթաց քիւլ։

Հարկ կը համարուի՝ այստեղ նշանակել թէ 1277 (1861) ամին եկամուտները՝ կայսերական դանձուն անցուցած դժուարին պարագաներէն հարկու փաս կրեցին, նմանապէս տէրութեան ծախքն ալ հարկու աւելցան նոյն պատճառաց համար ։

Ինչպէս որ վերը նշանակուած է, շրջաբերու թեան մէջ գտնուած բոլոր թղթագրամոց և շարժա կան կամանտոկոս պարտուց գումարը կը հասնի չորս միլիոն քսակի, որ է 18,284,800 լիրա ։ Բայց այս գումարը՝ որ տէրութեան հաշուետուարաց մէջնը շանակուած գումարէն աւելի է, կը պարունակէ նա և անցեալ տարուան ելումուտան հաշուէն պակասած պարտքը, որ գրեթէ 300,000 քսակ կամ 1,371,360 լիրա է ։ և խորհրդով չորս միլիոն դրուեցաւ, որ պէս զի տէրութեան ծախքը որոշեալ կերպիւ կանոնաւորելու ժամանակին՝ կարող ըլլամք մեծ ճշդութիւն ձեռք բերել ։

Կայսերական դանձուն այժմեան վիճակը այս կերպիւ համառօտելով, մեր առջև կը տեսնուի բաց պարտք մի, բազմապէս ի դրամով թղթի՝ որուն գումարը 2 միլիոն քսակ է կամ 9,142,400 լիրա և ի շարժական կամ անտոկոս պարտուց՝ որուն գումարը՝ նմանապէս 2 միլիոն քսակ կամ 9,142,400 լիրա ։ որ ընդամենը կը ընէ չորս միլիոն քսակ, կամ 18,284,800 լիրա ։ բայց այսմանէ տարեկան սովորական ելումուտէն պակասած պարտքը, որ 344 հազար և այսքան քսակի կը հասնի ։

Թուրքաստանը՝ որիչ տէրութեանց հետ բազմա տութեամբ, դեռ մօտ ժամանակներս բաց պարտուց ներքև ինկաւ և փոխառութեանց ձեռք դարկաւ ։ Թէպէտեւ տարակոյս չկայ թէ աւելի աղէկ կը լլար որ այս բաները չճանաչէր, սակայն այս գումարները այնպիսի ծանր պարտք չեն, որ երկիւղ պատճառեն թէ ներկային և թէ ապագային համար ։

Օսմանեան կայսրութեան ելումուտան հաշուեցուցակը բազմաթիւ ուրիշ քանի մի տէրութեանց ելումուտան վիճակին հետ, որոց բաց մնացած պարտքը շատ ժամանակէ ի վեր հաստատուն պարտուց (քոնսոլիտէ) կարող անցուցած են և ժամանակ ժամանակ նոյն միջոցը կը դործածեն, եթէ կը տեսնուի որ օսմանեան տէրութեան բացը՝ զոր հաստատուն պարտուց կարգը պիտի անցընէ, շատ փոքր բան է ։

Օրինակի համար Լանդոյ մէջ 1850ին, տէրութեան ծախքը 12,636,810 քսակի հասաւ որ է 1,436 միլիոն ֆրանք, և այս գումարին 6,292,000 քսակը կամ 715 միլիոն ֆր. վճարեցաւ ի սոկոս պարտուց ։ Գաղղիոյ մէջ՝ դարձեալ 1850ին, տէրութեան ծախքը 12,584,000 քսակ, այսինքն 1434 միլիոն ֆրանք եղաւ, և այս գումարին գրեթէ մէկ երրորդ մասը ի հաշիւ պարտուց անցաւ ։

Լանդոյի Սիսիլիոյ Լաֆանդայ 1848—1849 ելումուտան ամին մէջ, որ դաշնակից հասարակապետութեան տարեկան ծախքը՝ 2,701,600 քսակ (307 միլիոն ֆրանք) էր, մէկ քառորդէն աւելին տէրութեան պարտուց տրուեցաւ ։

Լատարիոյ մէջ, որ տէրութեան ծախքը՝ 6,156,400 քսակի, այսինքն 738 միլիոն ֆրանքի կը հասնի, գրեթէ հինգերորդ մասը սահմանեալ է ի վճարումն ազգային պարտուց ։

Սալոնի թուրքաստանի մէջ, որուն տարեկան ծախքը՝ 2,786,815 քսակի կը հասնի, միայն 334 միլիոն 498 հազար քսակը (կամ 1,529,057 լիրան) իւր հաստատուն (քոնսոլիտէ) պարտուց սոկոսին կը վճարուի, ըսել է որ գրեթէ ութերորդ մասը ։

Լեռնայի տէրութիւններէն մէկ քանին՝ իրենց եկամտից անբաւականութիւնը դարմանելու համար, ժամանակաւ ինչ միջոցներու դիմելը ամենուրեքային է ։ Սալոնի կայսերական դանձուն վիճակը այն աստիճան հասած չէ, որ յիշեալ կառավարութեանց շուղին հետեւելով՝ նոյն արտաքոյ կարգի միջոցները ձեռք առնուի տէրութեան փրկութեանը համար ։

Իւր բացը գոցելու և ազգային պարտքը վճարելու համար՝ թուրքաստանը երկու օրինաւոր աղբիւրներ ունի իւր առջև, որ են Տուրքը և փոխառութիւնները ։ Օսմանեան տէրութեանը մէջ տուրքը՝ իւրաքանչիւր անձի վերայ բաժանելով, գրեթէ 45 դուրուշ կը կոչուի մարդ գլուխ, այնինչ Լանդոյ մէջ գոցէ 300 դուրուշէն աւելի է և Գաղղիոյ մէջ 250 դուրուշը կանցնի ։ Թէպէտեւ այս մարդ գլուխ

ինկած տուրքին առաւելութիւնը՝ ժողովրդոց հաստատութեանը նշան է, այսու ամենայնիւ այս բանէն եղբակացընելու չէ թէ, ուր որ մարդ գլուխ տուրքը քիչ է, պէտք է աւելցնել զայն՝ հաւասարելու համար շատ եղած երկիրներուն ։ Սալոնի թուրքաստանի համար՝ որչափ որ մարդ գլուխ տուրք բաժանման գրութիւնը անկատարելութիւններ ունի, որ արդէն տէրութեան շատ քաղաքացի մէջ բարեկարգուած է, յիշեալ բաղդատութենէն կիմացուի թէ մարդ գլուխ տուրքը թուրքաստանի մէջ տակաւին շատ քիչ է, ուրեմն կարելի է աւելցնել զայն շատ նահանգացի մէջ, ուր հարկերը ծանրացած չեն ժողովրդոց վերայ ։

Տասանորդաց (էօշլուր) հաւաքումը՝ ըստ մեծի մասին վարձակալաց ձեռքէն առնուելով՝ ուղղակի ժողովրդոց յանձնուեցաւ, վարձակալաց ընելու շահը անոնց վերայ թող տալով ։ Գործումը թղթոց, որ հետաւորներուն տրուած հրամանագրիներուն (փաթէնթա) և ուրիշ հարկաց վերաբերեալ օրէնքները նորոգուեցան և կատարելագործուեցան ։ Եւ յայտնի է որ այս առեքելը մեծ գումար եկամուտ կը բերէն անէն տէրութեանց մէջ, ուստի տարակոյս չկայ թէ այս կողմէն օսմանեան տէրութեան եկամուտը մեծապէս պիտի աւելնայ ։

Վերջապէս աղբ և ծխախոտը մենավաճառութիւն մի պիտի ըլլայ ըստ նոր դաշնագրութեանց, զորս բարեկամութեանց հետ ըրինք ։ Աղբ ծխախոտը՝ ժողովրդոց վրաստարակաւ կարօտ եղած բաներէն մէկը չըլլալէն ի դատ, պարզապէս զուարճութեան վերաբերեալ ինքնութիւնն է և բոլոր տէրութիւնները մեծ եկամուտ ձեռք կը բերեն անկէ ։ Ուստի կայսերութեան երկիրներուն մէջ ստատուած ծխախոտին վերայ՝ ժողովրդոց կարողութեան չափով, հարկ մը դնելով, որ ամենին փաս չպատճառէր երկրագործութեան, այնպիսի եկամուտ մի ձեռք պիտի բերուի, որ ի սկզբան թէպէտեւ ուրիշ տէրութեանց ծխախոտէն ստացած եկամտից չհասարակի, սակայն դարձեալ բաւական գումար մի պիտի ըլլայ ։ Իսկ աղբը՝ ստոյգ է որ ժողովրդեան ամենահարկաւոր պիտոյքներէն մէկն է ։ Բայց մարդ գլուխ սպառումը աննշան բան մըն է ։ Ուրիշ տէրութեանց մէջ, աղին առեւտրոյն վերայ ծանր տուրք դրուած է ։ Բայց թուրքաստանի մէջ՝ ըստ որում ազատքները տէրութեան յատուկ ստացուածքն են, հետեւեալքը աղին վաճառումը ի հաշիւ կառավարութեան խիստ շահուէտ պիտի ըլլայ միշտ ։

Կարելի է նաեւ պարտուց վճարման հարկաւոր եղած գումարը ինչ 30,000 քսակի չափ յատկացընել հանքաց և անտառաց կանոնաւոր կերպիւ բանեցընելու և մատակարարելու և կը յուսացուի թէ այս կարգադրութեամբ հանքերէն և անտառներէն աւելի շահուէտ կը տեսնուի մի կողմէն, բայց աւելի յայտնի չէ յետ ժամանակաց այս եկամուտը մեծապէս պիտի աւելնայ ։

Եւ նշանակուած եկամուտներէն ի դատ, մաքսատանց դնահատութիւնները (թարիֆա) նորոգուելով, և հին դնահատութիւնները կարգադրուելով վաճառաց եկամտի արժէքից համեմատ, միայն այս նոր դնահատութիւնները հարկերէն 30 պիտի աւելցընեն մաքսատանց եկամուտները ։ Եւ թէպէտ նոր հաստատուած դաշնագրութեանց համեմատ՝ դուրս ելած վաճառաց մաքսը տարուէ տարի պիտի նուազի և ասկէց եկամտից պակասութիւն մի պիտի ծագի որ ուրիշ եկամուտներով պիտի լեցուի, այսու ամենայնիւ այս բանին վրայք եղած քննութիւնները կապացուցանեն թէ ներս մտած վաճառաց մաքսին աւելնալը մեծ գումար մի պիտի յարէ տէրութեան ընդհանուր եկամտից վերայ ։

Ուրեմն մեծապէս կը յուսացուի թէ, 1277 (1861) ամին եկամուտան հաշուեցուցակէն դուրս, արդէն վերը յիշուած եկամուտները՝ տէրութեան ընդհանուր եկամտից վերայ գրեթէ 715,000 քսակ կամ 3 միլիոն 278,408 լիրա պիտի աւելցընէ ։ Բայց յայտնաւորէ, տարին գրեթէ 150,000 քսակ, այսինքն 685,680 լիրա խնայութիւն մի պիտի ըլլայ, եթէ թղթաւ գումար շրջաբերութենէն ժողովուելով՝ կայսերական դանձը աղատ մնայ փոխանակութեանց փասներէն և տէրութեան պաշտօնարարները ըստ ժամանակին ընդունելով իրենց վարչութեանց յատկացեալ ստակը, կանոնաւոր կերպիւ և պատրաստ գումարով ծախ

խու առնեն հարկաւոր եղած բաները ։

Տես այս կարգադրութիւններն են, որոնք կայսերական դանձուն եկամուտները պիտի աւելցընեն ։

Գառնամբ այժմ փոխառութեանց միջոցին վրայք խօսելու ։ Լեռնայի պատուաւոր Գրամանոց մի առաջարկութիւններ ընելով մեղ ի մասին փոխառութեան մի, այս առաջարկութիւնները ընդունուեցան ի մէջ և այս փոխառութեանը գումար յաւելցընելով կառավարութեան գումար ներքին եկամտից վերայ և որոց մէկ մասը արդէն ձեռք բերուած է, այս երկու միջոցները կը տեսնուի բաւական են գանձուն զանազան պարտքը կանոնաւորելու ։

Եւս պարտուց հաստատուն վիճակի մը մէջ դնելու, այսինքն քոնսոլիտէ ընելու հիմունքը գեղ և սահմանաւոր եղանակաւ որոշեալ չեն, բայց այս պարտուց մէկ մասը պէտք է որ պատրաստ գումարով վերադարձի, նմանապէս ամսական վարձքերը և օժտական թոշակները՝ հաստատուն պարտուց կանոնաւորութեանէն դուրս պիտի մնան և պատրաստ գումարով ամբողջ պիտի վճարուին ։

Վերջապէս օսմանեան տէրութեան հաստատուն (քոնսոլիտէ) պարտքը և անոնց շահերը, ինչպէս նաեւ կանոնաւորելու բաց պարտքը և այս բանին համար պէտք եղած գումարները, նմանապէս այս գումարաց համար կայսերական դանձուն վճարելու սոկոսները, այս ամէնքը, կը տեսնուի իրար խիստ մեծ գումար մը չեն կազմը ։ Սակայն կողմանէ, ձեռք առնուելու միջոցները այնքան փասաւոր չեն բազմաթիւութեամբ ուրիշ տէրութեանց ձեռք առած միջոցներուն այսպիսի ծանր պարագայից մէջ ։ Բայց աւելի շահարէ հարկաւոր է ձեռք առնուելու միջոցները ի գործ դնել և կայսերութեան մէջ ինչպէս նաեւ դուրսը դաշնագրելու մեր պարտաւորութիւնները և խոստումները կատարել, և այս բանը ուրիշ ձեռքով հնար չէ ըլլալ, բայց միայն հաւասարակշիւութիւնը հաստատուելով տէրութեան ծախուց և եկամուտից մէջ, զինի ընդունելոյ հարկաւոր եղած գումար ի կատարումն յիշեալ պարտաւորութեանց ։

Եթէ 2-րդ կայսերական վճարաւորութիւնը բարձրագոյն վաւերացընելու այս կարգադրութիւնները, 1278 (1862) ամին եկամուտը և ծախքը կը նայ կանխաւ որոշուի, այս տեղեկագրոյն կից եղած հաշուեցուցակին համեմատ և որոց բովանդակութիւնը հետեւեալն է ։

Եկամուտ 1278 (1862) ամին, որ է 5,507,568 քսակ, կամ լիրա 13,118,640 ։ Ծախք նոյն ամին, որ է 5,110,843 քսակ, կամ լիրա 12,220,157, ըսել է որ ծախքը ելելէ ետեւ, եկամուտէն կաւելնայ 196,555 քսակ կամ 818,485 լիրա ։

Բայց որովհետեւ հարկ է մտածել թէ, ինչպէս որ եկամուտները կը նման հաւաքուի կատարեալ եկամուտան հաշուեցուցակին համեմատ, նմանապէս կարելի է որ սովորական և նոր եկամուտներէն յուսացուածին չափ ճիշտ արդիւնք չըլլայ և քիչ մը բան պակսի, կամ թէ առաջարկուած նուազութիւնը ծախուց՝ ճշդութիւն ի գործ չդրուի ։ Ուստի յիշեալ աւելցած գումարը սահմանեալ է այս հնարաւոր սխալը կամ պակասութիւնը լեցընելու ։

Ձեռնահաս մասնաժողովներ կաշխատին այժմ օրինաց առաջարկութիւններ ընելու, որոնք հաստատուելու եկամտից կատարեալ և կանոնաւոր գործաւորութեանը և անոր մասնաւոր պարագայիցը կը վերաբերին, և այս օրէնքը՝ նոյն եկամուտները ժողովելու ժամանակը ի գործ պիտի դրուին ։ Կառավարութիւնը միտք ունի նաեւ վարկի դրամաւորման (քէս տը քրէտի) հաստատելու, ուր ուղղակի պիտի հաւաքուին այն եկամուտները որոնք սահմանեալ են յապահովութիւն ներքին և արտաքին պարտուց և մօտեւոր դաշնագրութեան պարտաւորութեանց, նմանապէս հարկաւոր եղած վճարումները՝ ըստ ժամանակին ընելու համար ։ Վասն որոշ ձեռնահաս և բանիբուն անձինքներէ բազմապէս մասնաժողով մի այս առաջարկութեան գործադրութեան համար ձեռք առնուելու միջոցներուն վրայք զեղեալ է, և անոր ըրած որոշումները 2-րդ վճարաւորութեան առջև պիտի դրուին, որպէսզի 2-րդ կայսերական բարձր հաւանութեամբ հաստատուին ։

Կախընթաց ամաց հաշուետուարները զատ պիտի ըլլան նոր սկսուելու ամին հաշուետուարներէն, այսինքն յատուկ պաշտօնատուն մի պիտի սահ

